

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ, ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, ուրբաթ օրը, երեկոյան, Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ կատարվում է Ծրագալույցի արարողությունը, ի ներկայության բազմաթիվ հավատացյալների:

Հոգևոր ճեմարանի սաները ընթերցում են Դանիելի գրքից Երից մանկանց օրհներգությունը:

Ծրագալույցի երեկոյան սուրբ պատարագը մատուցում է հոգ. տ. Տիրան աբղ. Կյուրեղյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծննդյան տոնի նախատոնակը՝ Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ:

Մայր տաճարի խնկաբույր կամարների ներքո հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը:

Ժամերգության և արարողության ավարտին եկեղեցական թափորը շարականով և երգով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում է մայրավանքի աղն ու հացը, և ապա միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծննդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, շաբաթ օրը, դեռևս վաղ առավոտից, հավատացյալների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու նրա շրջափակը:

Մայր տաճարում պաշտվում է սուրբ Ծննդյան հանդիսավոր ժամերգությունը:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը:

Հայոց Հայրապետը Վեհարանում զգեստավորված քահանայապետական լրիվ զգեստավորմամբ, երգով ու շարականով և զանգերի ավետավոր հնչյունների ներքո հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար Ծննդյան սուրբ պատարագը մատուցելու:

Ս. Սեղանին սպասարում է վարդապետների, քահանաների և սարկավագների ողջ խումբը:

Ծննդյան ս. պատարագին ներկա են Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Ս. պատարագի ընթացքում Ճաշու Ավետարանը ընթերցում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գեր. տ. Գնել եպս. Ծերենյանը, որը և ապա կատարում է «Վերաբերում»-ը:

Ս. պատարագը վեհ հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Ս. Ծննդյան տոնի ուրախ առիթով ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ Հայոց Հայրապետը՝ ավետելու Քրիստոսի ծննդյան հոգևոր բերկրանքը և շնորհավորելու ողջ հայության սրբազան տոնը:

Հայոց Հայրապետի քարոզը, որը նույն գիշեր ձայնասփռվեց Երևանի ռադիոյով, տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8):

Հավարտ ս. պատարագի հաղորդություն են առնում հավատացյալներից շատերը:

Ս. պատարագի ավարտին Մայր տաճարում, Հայոց Հայրապետի հանդիսադրու-

թյամբ, կատարվում է Փրկչի Մկրտության տոնը՝ Զրօրհնյաց հանդեսը:

Ս. Սեղանի առաջ դրված են կաթսաներ՝ լցված ջրով:

Հայոց Հայրապետը օրհնությամբ խաչը գցում է ջուրը, և տաճարի կամարների տակ հնչում են «Այսօր ձայնն հայրական» և «Հիվ զարմանալի» մեղեդիները:

Հավարտ Զրօրհնյաց հանդեսի Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ընդունելության դահլիճ:

Հանուն հայ ժողովրդի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, Ծննդյան տոնի առիթով Հայոց Հայրապետին շնորհավորում է տ. Գնել եպս. Ծերենյանը՝ ցանկանալով Նորին Ս. Օծությանը քաջառողջություն, արևշատություն և երջանիկ հովվապետություն՝ ի փառս Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և ի միխիթարություն հայ ժողովրդի:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Հայոց Հայրապետը, շնորհավորում բովանդակ հայության Ամանորն ու ս. Ծննդյան տոնը, օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին և խաղաղություն բարեմաղթում ողջ աշխարհին և համայն մարդկությանը:

Ս. Ծննդյան տոնի առիթով, Վեհարանում հյուրասիրությունից հետո, բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետին և ստանում Նրա օրհնությունը: